




Տպարանս փոխադրուած է Պապր ալի  
նատտէսի թիւ 38, Իգտամ լրագրին դէմ:



THE UNIVERSITY OF CHICAGO

LIBRARY

OF THE

PHYSICAL SCIENCES

AND

MATHEMATICS


CHICAGO, ILL.

1892

THE UNIVERSITY OF CHICAGO

LIBRARY





ՀԱՆՐԻՍ  
ՏԱՍՆՕՐԵԱՅ

— هانراكيداق —  
مجموعه علوم

HANKRIDAKUE

JOURNAL ARMÉNIEN ENCYCLOPÉDIQUE

Ե. ՏԱՐԻ — ՆՈՐ ՇՐՋԱՆ

ԹԻԻ 22

1 ԱՊՐԻԼ 1902

### ՄԱՅԻՍԻ ԵՐԳԵՐ

## ՓՈՔՐԻԿՆ ԶԱՊԵԼ

Գարնան աղջիկն է աղուոր ու գողտիկ,  
Արժաք փրփուրէն է ծնած ծովուն,  
Բացուի փայլերուն ասկ ծիլ ծիլ ծաղիկ  
Երփներանց սիրուն

Շեւք իր ձայնին չունի բնաւ քոչուն,  
Զոր ծածկեն խիս խիս սուտեք անտառին.  
Երբ արձագանք այ իր եղբ հնչուն,  
Մնողը բերկրին:

Յօնքերուն ալեղ գրծեր է երկինք,  
Շրքեն է փաղեր մեղրն հիւք անուռ,  
Յոլքեր բարուքեան կը նանաչէ ինք,  
Քանի՜ է փնուռ:


Բարի հրեւակին հեքք քել ի քել՝  
Դու նոր նոր ափեր ողջունէ ընդ միւս  
Ոսոսուն ինչպէս քիթունիկ քիթել  
Վարէ կեանք անվիւս:

Քու պատկերդ անբիծ փայլի սանք մեջ՝  
Զրգելու իրեն աչեր սիրավառ,  
Քեզմով զեղու հոն խնդուքիւն անվերջ:  
Բարիք անբաւար:

Ո՛հ, տունն է դրախտ, բոյն ծաղկապսակ,  
Ուր շնորհաց գանձեր կը սփռէ աղջիկ,  
Կ'ընծայէ հօր մօր փաղցուքեանց բաժակ,  
Օրե՛ր երջանիկ:

Վերեն, անհունին խորեն քող Աստուած  
Քեզ երանութեան ուղիներ հարքէ,  
Պ սհէ՛ անվնաս բունիկըդ հիւսուած:  
Յաւիթիկ, վարդի:

Ս. ԴԱՐԱՄԱՃԵՆ





## ԲԱՐՈՅԱԿԱՆ ԵՒ ԳՈՐԾՆԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

ԱՂՋԻԿՆԵՐՈՒ ՎԱՐԺԱՐԱՆԻ ՄԷՁ

« Հաստատել խորհելու, զգալու գործելու սովորութիւններ. ահա անոր մէջն է ամբողջ դաստիարակութիւնը »:

Ա. — ԿԵԱՆՔԸ ԸՆՏԱՆԻՔԻ ՄԷՁ

17. Ինչո՞ւ համար տղայք պէտք է հնազանդիւն իրենց ծնողքին

Ձեր կեանքին առջի տարիներուն մէջ, դուք այնչափ տկար, այնչափ փափուկ էք որ միայն անոնց հնազանդելով կրնաք ձեր գոյութիւնը պահպանել, որովհետեւ ձեր ցգիտութիւնը եւ սկստութիւնը անգաղար ձեզ պիտի ենթարկեին մեծամեծ վստահութեամբ. — բայց ձեր այժմեան տարիքին մէջ կ'սկսիք փափաքել առանց ուրիշի խորհրդին գործել և ձեզի դժուար կուգայ հնազանդիւն հակառակ ձեր կամքին, բայց և այնպէս դեռ դուք շատ պէտք ունիք ձեր ծնողքին հնազանդելու, որովհետեւ բնաւ փորձառութիւն չունիք և կեանքի վերաբերեալ բաներու մէջ տգէտ էք, շատ սխալներ պիտի գործէք, եթէ միայն ձեր երեւակայութեան հետեւիք:

Բաց աստի, խորհեցէք թէ՛ ընտանիքի մէջ կեանքը շուտով անհասկնալի պիտի դառնայ երբ տղայք միայն իրենց փառանքովին հետեւին, մէկն այս ուղած ժամանակ միւսն ուրիշ բան ուզէ, մէկն ուզէ որ այսպէս ընեն, միւսը փափաքի ուրիշ կերպ: Հօր և մօր հեղինակութիւնն այս անկանոնութիւնը արգիլելու համար է: Այս հնազանդութեան և յարգանքի հեղինակութիւնն է, որ ընտանիքը ներդաշնակութեան մէջ կը պահէ: Ընտանիք մը ուր տղայք հնազանդիւն չգիտեն կասկածալ ընտանիք մը չէ:

18. Յօժարակամ հնազանդութիւն

Ձեր ծնողքին պահանջած հնազանդութիւնը անասնային յիմար հնազանդութիւնը չէ, որ ծեծուելու վախէն յառաջ կուգայ: Ձեր հայրն ու մայրը կը փափաքին որ հնա-

զանդիւն չէ թէ վախճալէն, այլ սիրելէն: Եթէ գորովանօք կը խորհիք ծնողքին վրայ, եթէ չէք ուզեր անոնց նեղութիւն պատճառել, պէտք է անմիջապէս և կատարեալ կերպով գործադրէք ինչ որ պահանջեն: Պիտի չըսէք « Այո՛, անմիջապէս » առանց տեղերնէդ շարժելու: Հնազանդելէ առաջ շատ տեսակ բացատրութիւններ պիտի չպահանջէք: Խորամանկութիւններ ու այլ և այլ դարձուածներ պիտի չփնտռէք անոնց հրամանը մասամբ միայն կատարելու համար: Դժգոհ կերպարանքով պիտի չհնազանդիք: Ընդհակառակը, դուք շատ բախտաւոր պիտի լինիք որքան կարելի է շուտ և ուրախութեամբ կատարելով այն բոլորը ինչ որ կը պահանջեն ձեզմէ:

Եթէ հնազանդութիւնը ձեր սրտէն բղխի, պիտի հնազանդիք ձեր ծնողներուն նոյն իսկ այն ժամանակ, երբ անոնք չեն տեսներ, մինչեւ իսկ երբ այլ եւս այս աշխարհին մէջ չեն, որովհետեւ սրտերնուդ մէջ պիտի պահեք անոնց խօսքերու եւ խրատներու քաղցր յիշատակը:

19. Առաքինութիւնը բարձր է հնազանդութեան

Երբեմն կը պատահին՝ թէ՛ և շատ քիչ անգամ այնպիսի ծնողներ, որոնց խիղճը մաքուր չէ և իրենց զաւակներուն դէմ բաներ կը պատուիրեն. օրինակ՝ գողնալ կամ ստել:

Նոյն իսկ գորովով սիրուած հօր մը մօր հնազանդելու համար պէտք չէ գեթ գործ մը ընել: Բայց քաղաքավարութեամբ, քաղցրութեամբ և հաստատամտութեամբ պէտք է բացատրել թէ ինչո՞ւ չեն հնազանդիր: Որովհետեւ կայ բան մը որ ամէնէն բարձր է, նոյն իսկ մեր ծնողքին համար ունեցած գործէն և որդիական հնազանդութեան պարտականութենէն, այն է ուրիշներուն չարիք չհասցնել, ուրիշներուն ստացածուածքին ձեռք չսալլ, մեր ամէն գործերուն մէջ պատուաւոր լինելու մեծ պարտաւորութիւնը:

Բարեբաղդաբար բացառութիւն են այն պարագաները ուր տղաք կրնան չհնազանդիլ: Յաճախ կը տեսնուին ծնողներ, որ քեւել իրենց համար շատ խղճամիտ չեն, բայց կը փախափին, որ իրենց զաւակներն արդար եւ բարի լինին:



20. Նրախազիսութիւնը սրտի յիշատակարանն է  
Դեռափթիթ աղջիկ, յիշէ այն երկար  
տքնութիւնները, որ մայրդ անցուցեր է  
օրօրանիդ քով և այն բոլոր խնամքները,  
որ քեզ շնայլեր է, երբ դու բոլորովին փո-  
քըր էիր և տկար, այն աշխատանքը, որ կը  
կրէր անդադար քեզ ո՛ր եւ է նեղութենէ  
ազատելու համար:

Յիշէ՛ նաեւ թէ հայրդ քեզ համար կ'աշ-  
խատի, կը ծերանայ քեզ կրթելու, սնու-  
ցանելու և հագուեցնելու նեղութենէն եւ  
յողնութենէն:

Քանի յիշես այս բոլորը, սրտիդ մէջ  
պիտի զգաս որդիական սիրոյ ջերմ և կեն-  
դանի զգացում մը, որ է նրախազիսութիւնը:

Պիտի փափաքիս մօրդ հատուցանել վա-  
յելած բոլոր բարիքներդ, պիտի փափաքիս  
աշխատելու կարող լինիլ, որպէս զի ծնողքդ  
հանգստանան. երբ հարկը պահանջէ դարձ-  
եալ երախտագիտութիւնն է, որ քեզ կը  
ներշնչէ այս ազնիւ խորհւելոյները: Գիտես  
ի՞նչ է երախտագիտութիւնը: Նրախազիսու-  
թիւնը սրտի յիշատակարանն է:

21. Ի՞նչ կ'ըսէ ապերախս տղայ մը

Ես գիտեմ թէ ապերախտ տղայ մը ինչ կը  
մտածէ. ինքնիրեն կ'ըսէ. « Ես չխնդրեցի  
աշխարհ գալ: Եթէ զիս աշխարհ բերին ծը-  
նողքս, պէտք է զիս մեծցնեն, պէտք ե-  
ղածը տան: Օրէնքը զիրենք կ'ոտկպէ »:

Այս լեզուն արհամարիկ է:

Տղաքս, եթէ ձեր ծնողքները միայն  
դէպի ձեզ ունեցած պարտականութիւնները  
կատարէին, որչափ դժբաղդ պիտի լինէիք,  
որովհետեւ բաւական պիտի լինէր ձեզ հա-  
զիւ հագուեցնել, տանը մէկ անկիւնը բնա-  
կեցնել և կտոր մը հաց տալ: Փոխանակ այս-  
պէս ընելու ձեզ կը խնամեն և իրենց պար-  
տականութիւններէն հազար անգամ աւելին  
կ'ընեն: Շատ անգամ ձեզի համար կը զըր-  
կուին իրենց հաճոյքներէն, բոլորովին ձեզ  
կը նուիրուին ու իրենց բոլոր կարողութիւ-  
նը ձեզ կուտան:

Ապերախտութիւնն այնպիսի պակասու-  
թիւն մըն է, որ կը հեռացնէ այն բոլոր ան-  
ձերը, որք կրնային բարեկամ լինելու վրայ  
խորհիլ: Ապերախսը կ'արհամարհեն, անկէ կը

փախչին, որովհետեւ եթէ խտասիրտ են  
իրենց ծնողքին հանդէպ, որ զիրենք այն-  
չափ սիրեցին, ի՞նչ պիտի լինին ուրիշ ան-  
ձերու համար, որոնց պիտի մօտենան:

22. Սիրենք մեր եղբայրները եւ քոյրերը

Թռչունի մը բոյնի մէջ հինգ վեց փո-  
րիկ ձագուկներ ծուէն ելան միասին զար-  
գացան մօրը խնամքով, որ միշտ անհան-  
գիստ էր և միշտ կ'աշխատէր իր ձագուկնե-  
րուն համար: Երբ փոքրիկներու թիւերը  
զօրացան, ահա կը բաժնուին և ամէնը մէկ  
կողմ կը թռչնէ: Այլ եւս իրար չեն ճանչ-  
նար, իրարու դէմ կ'ելլեն, կը թաուին մի-  
եւեւոյն ճիւղի վրայ, կը քնանան միեւեւոյն  
թփի վրայ, ոչինչ կը յիշեցնէ անոնց իրենց  
մանկութիւնը, ոչ մի բան անոնց կ'ըսէ թէ  
եղբայրներ են, ոչ մի բան առիթ կուտայ  
զիրար վերատին ճանչնալ և սիրել:

Երջանիկ ենք հոգի մը ունենալով, որ  
մեզ թռչուններէն աւելի մտացի, ազնիւ և  
աւելի զգայուն կ'ընէ: Սիրենք մեր եղ-  
բայրներն ու քոյրերը, որոնց հետ այնքան  
միեւեւոյն յիշատակներ ունինք: Մենք բոլորս  
միասին մեծցանք նոյն յարկին տակ, միեւ-  
նոյն մայրական խնամքի, գոգուանքի եւ  
պաշտպանութեան տակ: Մշակենք կզրայ-  
րական այն սէրն, որ Աստուած դրած է  
մարդուն սրտին խորը և որմէ զուրկ են  
անհոգ թռչունները:

23. Ինչո՞ւ համար պէտք է եղբայրական  
բարեկամութիւն մեակել

Երիտասարդութեան տառն պէտք է կզ-  
րայրական բարեկամութիւնը մշակել, որով-  
հետեւ եթէ անխնամ թողուի՝ կը նուազի.  
սիրային ցուցումներու պակասութենէն կըր-  
նայ մինչեւ անգամ բոլորովին անհետանալ:

Յետոյ մարդ որչափ երջանիկ է, երբ  
զղաց թէ եղբայրներ և թէ քոյրեր սելտիւ  
կապուած են իրարու, դեռափթիթ աղջիկ-  
ներ խորհեցէք թէ պիտի գայ օր մը, որ  
ձեր ընտանիքէն միայն ձեր եղբայրներն ու  
քոյրերը մնան, երբ ձեր ծնողները շատ  
տենտիան քնով քնած լինին: Այն տառն  
գիտի գնահատէք և հասկնաք քոյրեր և եղ



բայրներ ունենալու բարեբաղդութիւնը եւ անոնց հետ պիտի կրնաք խօսիլ անցեալին վրայ :

Որպէս զի եղբայրական այս քաղցր ըզգացումը տեսողական լինի եւ մնայ այնչափ որչափ ապրինք, պէտք է մեր սիրոյն առջալայտութիւնը մեծ խնամքով պահպանենք զգուշանալով ամէն անհաճոյ կատակներէ, նախանձէ եւ կասկածանքներէ, որ կրնայ մեր սիրելի քոյրերուն, եղբայրներուն տհաճութիւն պատճառել :

ՏԻԿԻՆ Փ. ՀԱԶԱՐԱՊԵՏԵԱՆ



### ՀՕՐ ՄԵՐ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Սիրելի կողակցի մը սուգին մէջ աշխարհի ո՞ր խնդիրը կրնայ գրաւել միտքս եթէ ոչ իմ իսկ դժբաղդութիւնս : Իրա՛ւ, անձնական վիշտերով ուրիշները զբաղեցնելը անպատեհ բան է, բայց այն խորհրդածութիւններէն, որոնցմով միտքս կը վշտակրի՝ դուցէ ուրիշին ալ օգտակար բան մը կ'ելլէ : — Ահա՛ երեք պտըլիկ տղաքներ, որոնց ալ այսուհետեւ հայրն ու մայրն եմ միանգամայն, ինծի կը նային եւ ըսելիքիս կ'ըսպասեն : Գէթ ըսելիքս հասուն մտքի մը եւ անկեղծ խորհուրդի մը պտուղը պիտի ըլլայ եւ իբր այն ինչո՞ւ ուրիշներն ալ չօգտուիլ չկարենան : Գուցէ պարտականութիւններուս վրայ ըրած խորհրդածութիւններս չիտակ չըլլան, բայց եթէ կը սխալիմ ուրիշ հայրերու իմացականութիւնը իմ պակասս պիտի լեցնէ, եւ եթէ չեմ սխալիր՝ դժբաղդութիւնս անոնց օգտակար պիտի ըլլայ :

Ի՞նչ են հօր մը պարտականութիւնները որուն տղաքը դարուս հետ կը ծնին :

Առաջին, անվիճելի պարտականութիւնը մեր եղածէն տարբեր մարդեր ընելն է զանոնք :

Ուսումնական պիտի ըլլան զաւակներս : Երբե՛ք : Մէկ աւելի ուսումնականը՝ աւելորդ ուսումնական մըն է : Տղան անօթութեան դէմ զինելու համար պէտք չէ անիկա առաջնորդել անօթի ասպարէզի մը վրայ ուր հաց չբուսնիր : Մարդու տարիքը թեւակոխող պատանին երբ հոն կը հասնի՝

ատելութիւնով միայն կը սնանի, եւ խառուած փառասիրութիւնը՝ վրէժխնդիր ոխի մը կը փոխուի : Անցեալ դարը՝ շատերիւրեանց ընկերական դատակարգէն դուրս ըրաւ : Իմ տարիքս մարդ մը՝ որ երիտասարդութեանը սքանչելի ապագայ կը խոստանար, անցեալ օր եկաւ ինծի տեսնելու. փաստաբան եղած էր եւ գլուխը խոթելիք գործ մը չունէր. քանի մը հին բարեկամներու յանձնարարութեամբ տեղ մը գտած էր ձմեռուան եղանակին համար. մեծ վաճառատան մը մէջ վառարանները կը բռնկցնէր եւ փայտ կը կրէր : Երբ վառարանները տաքցնելու եղանակը անցնի, նորէն ձեռք պիտի առնէ պապուկի ու դատարկաշըլիկի կեանքը :

Չէ՛, իմ զաւակներս չեմ կրնար իմ իսկ ձեռքովս այս սոսկալի ապագային պատրաստել. կ'ուզեմ որ իրենք իրենց գործ մը տեսնելու կարող ըլլան : Չեմ ուզեր ձեռքնտու գտնուիլ ախտի մը որ երկար տարիներէ ի վեր երիտասարդութիւնը կը կրծէ, ըսել կ'ուզեմ վաճառականի մը քով մտնելու առիթսը :

\* \* Դարմանը գտնելու համար, առաջ բնտուենք թէ ո՞ւր է չարիքը :

Մեր սերունդը բան մը չարիքաց գործնական աշխատութեան մասին : Անիրաւութիւն պիտի ըլլար ըսել թէ մեղի գտնուեցաւ, ջանք ընելէ ետ կեցաւ. մինակ՝ տուած աշխատութիւնը պարսպ բաներու վրայ էր :

Տեսէ՛ք այսօրուան Ֆրանսան : Այդ երկիրը ամբողջ դարեր ամէն նախաձեռնարկներու մէջ առաջինը, ամէն յառաջդիմութեան ներշնչողը եղաւ. բայց հիմակ, դաստիարակութեան խնդիրին մէջ քանի մը դարեր ետ մնացած է. դեռ այսօր իսկ կաշկանդեալ կը մնայ միջնադարեան դպրոցականութեան մը մէջ, Գերմանիա ալ այդպէս էր ժամանակին՝ մինչեւ այն օրը ուր կէօթէի ձայնը իմացուց վտանգը, ցուցուց դաստիարակութեան փոփոխութեան պէտքը : Անգլիացի երիտասարդը ցուցնելով իր երկրին երիտասարդներուն, մեծ Տեսնողը ըսաւ անոնց. « Ի՛՜՜ք ալ անոնց չափ անձնական արժանիք ունիք, բայց դուք քիչ կը գործէք : Ընել չէք գիտեր : Դուք չէք ճանչնար անձնական պարտականութեան զգացումը, մինչդեռ անոնք գիտեն. դուք չունիք անհատական կարողութեան զգացումը՝



որ համայնքի մը ոյժը կը կազմէ»։ Կէօթէի այսպէս խօսած ժամանակը Գերմանիա վաճառականութիւն չունէր և կոյրզկուրայն միւս ժողովուրդներու ետեւէն կը քալէր։ Անկէ ի վեր հարիւր տարի հազիւ անցած է եւ ահա մեծ բանաստեղծին աշակերտներէն «վաճառականներ» ելան՝ որոնց գործունէութիւնը նոյն իսկ մտահոգութիւն կուտայ իրենց օրինակ ծառայող ազգին։ Անգլիա մտահոգութեամբ կը նայի գերման վաճառանիչերուն բոլոր հրապարակները բռնելու ձգտումին։

Եւ բոլոր այս բաները եղան դաստիարակութեան փոխուելով, անհատական ձեռնարկու ոգիին զարգացումով, ամէն տեսակ աշխատութեան վրայ անձնական կարողութիւնին չափելու ոգիով։

\* \* Արդ մենք ալ մեր կարգին պատրաստուինք գործի աշխարհին մէջ, գործնական մարդիկ ըլլանք և կորած ժամանակը չահինք։

Իմ զաւակներս գործնական կրթութիւն մը պիտի ունենան օգտակար արհեստի մը՝ Գործի պատրաստուելու համար։ Գիրքերու մէջէն պիտի սորվին ճիշդ այնքան բան՝ որքան պէտք է կոյրզկուրայն չգործելու համար։ Իրենց գործիքները պիտի տան իրենց պէտք ունենալիք ծանօթութիւնները։

Մենք գործնական աշխարհը չճանչնալնու համար է որ խեղճ կը մնանք, և ամէնէն մեծ սխալնիս՝ ինքզինքնիս ամէն բանի մէջ ուրիշէն բարձր նկատելնիս է։ Ասոր համար՝ երբոր ձեռքերնին պայուսակ մը կրելու չափ զօրաւոր ըլլան, իմ զաւակներս պիտի երթան օտար երկիրներու մէջ, տեսնելու համար թէ մենք գործի աշխարհի մէջ միւսներէն աւելի ճարպիկ ենք։ Ամէնէն առաջ պիտի երթան Գերմանիա, տեսնելու համար ժողովուրդ մը որ ժամանակաւ մեր գործի մէջ ունեցած հիւանդութեամբ կը տառապէր և որ այսօր բժշկուած է։

Ետքը պիտի խրկեմ զանոնք Ատլանտեանէն անդին, դէպի Նոր Աշխարհը։ Հոն պիտի վերլուծեն կեանքի ներկայ պահանջներուն օրէնքները և հետադօտեն ապագան։ Ամերիկայի մէջ է որ պիտի հասկնան կատարելապէս թէ նոր դարու նոր ոյժերէն ի՞նչ օգուտ կարելի է քաղել։ Պիտի սորվին այդ գործունեայ ժողովուրդէն թէ անհատի մը

դերը մինչեւ ո՞ր աստիճան կրնայ եղեր բարձրանալ։ Երկու բառ պիտի օգնեն մեզի ցուցնելու այդ ժողովուրդին գործի աշխարհի մէջ ունեցած ձգտումները, բաղձանքները։

Մենք մեր դպրոցները կազմակերպելու համար ունինք Ուսումնական Խորհուրդ մը, անոնք ունին Դասխարակութեան Դիւան մը։ Այսինքն մենք ուսում կուտանք, իսկ անոնք կը կրթեն։ մենք բառեր կուտանք գոց ընելու համար, մինչդեռ անոնք դեր մը բռնել կը սորվին։ մենք ուղեղը կ'զբաղեցնենք տարազներով, իսկ անոնք բազուկը կը վարժեցնեն գործելու նկատմով։ Անոնք գործնական են, իսկ մենք չենք։ Եւ ասոր համար անոնք անփոփոխ ուժով մը կ'աշխատին, մարդեր կը պատրաստեն, եւ դպրոցներու մէջ մշակածնին, իրենց լեզուաւ խօսելով, «կամքի զօրութիւնն է, առանց որու բնատուր տաղանդը և կատարեալ բան գիտնալը՝ օգուտ մը չեն կրնար արտադրել»։ Այս նիւթապաշտ կրօնքի դաւանանքը իրենց ամէնէն գաղափարապաշտ սեպած փիլիսոփայէն՝ Լիբրսնէ կուգայ։ «Կեանքը ո՛չ մտաւորականութեան, ոչ քննադատութեան կը պատկանի, հապաւմբողջովին գործի»։ Դպրոցին դրան ճակատին վրայ գրուած է. «Դպրոցին գերադոյն նպատակը նկարագրին կազմութիւնն է» եւ կամ «Երիտասարդները, աննկուն կամքով՝ կեանքը ճանչնալու արուեստին պիտի տիրանան»։

Կեանքի պայքարի համար պատրաստուած մարտիկներու հետ է որ իմ տղաքս գործ պիտի ունենան։ Ուրեմն անոնք ընդհանուր կրթութեան մը տեղ գործնական դաստիարակութիւն մը պիտի ստանան։ Արուեստական վարժարանները պիտի երթան, արհեստ մը պիտի սորվին — վաճառակտնութիւն կամ ճարտարարուեստ։ Իրենց մտքէն բոլորովին հեռու պիտի վանեմ անձնագով մեծամտութիւնը որ կ'ամլացնէ իմացականութիւնը։ պիտի սորվեցնեմ թէ իրենք պզտիկ բաներ են, թէ միշտ պզտիկ բան մը պիտի մնան, և թէ այս համեստ, խոնարհ ճամբուն մէջ պատուաւոր կերպով աշխատողին ունեցած արդիւնքը՝ վստահ, հունձքը անվիճելի է։ Ան պիտի հնձէ պատիւ՝ առանց փառքի, մեծանձնութիւն՝



առանց անափառութեան, բարեգործութիւն՝ առանց ճոխանքի: Եւ պիտի աւելցնեմ որ եթէ ասանկ ապրին իրենք, ոչ միայն հանգիստ կեանք մը պիտի ունենան, հապա ընդհանուր բարեկեցութեան պիտի նպաստեն: Որովհետեւ առնաբար ինքզինքին օգտակար ըլլալ գիտցողը՝ միեւնոյն ասեմ օգտակար է նաեւ իր երկրին:

Բ.

Տիարպէրի

ԼԵՒՈՆ ՍՐԱՊԵԱՆ



ՄԱՆԿԱԿԱՆ ԶՕՆԻԿՆԵՐ(\*)

### ԱՐՈՒՍԵԱՎ. ԼՈՒՍԻՆ

Կ'երգե՞ք դուք հիմա, կը ժպտի՞ք քե չե Զանգակիկն ձեզի դասի կը կանչե. Ի՞նչ կ'ընե՞ք արդեօք, գործերնիդ ի՞նչ է. Փունջեր կը բաղե՞ք ծաղիկ կանանչե, եւ պարտիկն խոր՝ քեքեւ, ոսոսուն՝ եկեր եք խաղա՞լ, խնդա՞լ այս առտուն:

Արուսեա՛կ, Լուսի՛ն,  
Շնորհի՛ք Յիսուսին՝  
Զեր վրայ հոսին,  
Ապրի՛ք միասին:

Ա՛ն, երգի, դասի, խաղի ժամանակ,  
Սամ երբ կ'աղօթեք ի ծուկն՝ գլխահակ,  
Հայրիկն ու եղբայրն անուշ յիշատակ  
Մը կ'արթնցնեն ձեր ոտքերուն տակ,  
Ու զմեզ կը յիշեք, գիտեմ, ո՛հ, գիտեմ,  
Անուշի՛կ փայլեր, չմնալ, ժպտալեմ:

Արուսեա՛կ, Լուսի՛ն, եւայլն:

Ապրի՛ք, զարգանա՛ք. Տիրոջ հովանին՝  
Որ կեանք կը բաշխէ ծաղիկն, թռչունին,  
Զձեզ պահէ միշտ զուարթ, խնդազին  
Որ կարգաւ ունիք, ժիր եռանդագին,  
Եւ դուք՝ պնդիկ փայլեր երկոքին  
Խիղճ տա՛ն ձեր եղբոր ու մեր հայրիկին:

Արուսեա՛կ, Լուսի՛ն, եւայլն:

Համբո՛յր աչքերնուդ, համբո՛ւր կաթոգին,  
Դո՛ւք եք մեր կեանքը, դո՛ւք եք մեր հոգին,  
Զեր սիրս ու միտք բոլ ուսմամբ բորբոքին:  
Աւխտեցե՛ք միշտ, ժամն է քանկագին.

(\*) Եղբոր մը կողմէ՝ իր բացակայ քոյրերուն, որոնք գիշերօթիկ վարժարանի մը մէջ կ'ուսանին:

Զանազե՛ք ալ ձեր հոգւոյն ու մտքին՝  
Ուսում, բարութիւն ու ձիւրքեր անգին,  
Համբո՛ւր աչքերնուդ, համբո՛ւր կաթոգին:

Արուսեա՛կ, Լուսի՛ն,  
Շնորհի՛ք Յիսուսին՝  
Զեր վրայ հոսին,  
Ապրի՛ք միասին:

### ԱՆԻԾՈՒԱԾ ՏՂԱՆ

(Շար. Չերդ. քիւեն)

Պ. Պրըվան՝ որ մինչեւ այս վայրկիսին խորունկ կերպով մտածող մարդու մը երեւոյթն ունէր, յանկարծակի զաւկին վրայ նետուեցաւ, վասն զի ժիւլի համարձակ խոտովանութիւնը զանի յուզած էր. խաղաղասէրի մը ձայնով ըսաւ.

— Զեր բարեաց եւ ձեր աշխատութեան յարատեւութեան համար արդարութիւնը կը գործադրեմ, պարոն, բայց որովհետեւ դուք աննուաճ նկարագիր մը ունիք, եւ ես ալ պիտի մեկնիմ այն նահանգը՝ ուր կառավարութեան դատաւորը ըլլալ կոչուած եմ, զայն բարեփոխելու չեմ կարող: Ուրեմն, պարոն, պատրաստուեցէ՛ք վաղը Պօրտօ մեկնելու ձեր մօրեղբօր քով, որ նոյն քաղքի քօլէճին տեսուչն է եւ ուսումը աւարտելու համար ձեզի պէտք եղած խնամքը պիտի տանի:

— Վաղը մեկնի՛ր, բացազանչեց ժիւլ, զիս ձեր տունէն կը ձամբէ՞ք, ո՛հ, հայրիկ, ստիկա չպիտի գործադրէք, այնպէս չէ՞:

— Պիտի ընեմ, աւելցուց պարոն Պրըվան բարկութեամբ:

— Եւ... Ալֆրէտ ալ իմ հետս պիտի մեկնի՞, հարցուց յուզուած չեղաով,

— Ասիկա ձեր գիտնալիք բանը չէ:

— Ներեցէ՛ք ինձ, հայրիկ, որովհետեւ Ալֆրէտ չպիտի մեկնի, ես ալ չեմ թափափ:

— Մնա՛լ...

— Այո՛, այսպէս մտածեցի:

— Թէ որ ես հակառակը մտածեմ:

— Անշուշտ չպիտի վունտէք զիս: Ընդմիջեց ժիւլ դեղնած ու տոգունած:



— Ձեզի չափտի վռնտեմ, բայց պիտի մեկնիք:

— Պիտի մեկնի՞մ, պիտի թողո՞ւմ ձեր տունը, ձեր տունը՝ ուր խեղճ մայրիկս աւանդեց իր հոգին, ուր կը գտնուին իր կենդանագիրքը, իր թիկնաթուղը, իր պզտիկ դործի սեղանը. ո՞չ, հա՛յր, չափտի՛ մեկնիմ:

— Պիտի մեկնի՞ք, գոչեց Պ. Պրըվան ձայնը բարձրացնելով:

Ժիւլ իր մօրը յիշատակներով բորբոքած՝ որ մեռած էր երկու տարիէ ի վեր, և որուն յիշողութենէն բան մը ջնջուած չէր, աւելցուց.

— Ո՛չ, իմ տեղս այս կնոջ տղուն չափտի թողում:

— Այս կինը ձեր մայրն է, ըսաւ Պ. Պրըվան, անոր հետ յարգանք խօսեցէք:

— Իմ մայրս մեռած է, մրմուսաց Ժիւլ ցածուկ մը:

— Ան անոր տեղը կը բռնէ:

— Աղուոր, ձեր տունէն զիս վռնաւելով: Ո՛չ, այս կինը իմ մայրս չէ, ո՛չ, այս մանջը իմ եղբայրս չէ:

— Լռեցէ՛ք, հնազանդեցէ՛ք, ըսաւ Պ. Պրըվան:

— Է՛հ, Աստուած իմ Տէր, ի՛նչ անօգուտ խօսք, ըսաւ տիկին Պրըվան ելնելով ու բռնելով իր տղուն ձեռքէն. Դուք հայր էք կառավարեցէք, սենեակէն դուրս չափտի ելլեմ. մինչեւ որ այս տղան տունէն դուրս չելլէ:

— Կեցէ՛ք, սիրելի բարեկամուհիս, ըսաւ Պ. Պրըվան, իր կնոջ ձեռքէն բռնելով:

Յետոյ դէպի ժիւլ դառնալով՝ յօնքերը կը պռտտէր, որն որ գունատ ու դողազին ոտքի վրայ էր, աւելցուց.

— Կը տեսնէք որ, պարոն, տանս խաղաղութիւնը կը խանգարէք, իմ տանս մէջ խռովութիւն, վաղը պիտի մեկնիք, բառ մը իսկ մտիկ չեմ ըներ:

— Ձիս բռնի կառք չափտի կրնաք դնել, պատասխանեց Ժիւլ վշտազին շեշտով, եւ արցունքը պահելով:

— Բռնի, եթէ երբեք պէտք ըլլայ, մարմնոյս օժանդակութեամբ:

— Սպաննեցէ՛ք զիս, ճչեց Ժիւլ ոտքերը գետին զարնելով, արցունքով ողողուած:

Չափտի ելլեմ, եթէ զիս բռնի կառք դնեն, պատահանէն պիտի ցատքեմ, պիտի ջախջախուիմ ձեր տունն ոտից ներքեւ, պիտի պռնամ, կանչուըռտեմ. — « Այս իմ հայրս չէ, զիս վռնտողը այս կինն է, որ իմ մայրս չէ՛, մօրուս է »:

— Անմիտ, պռնաց Պ. Պրըվան, դո՛ւրս ելիր:

— Ո՛չ, չափտի ելլեմ, ո՛չ, այս կինը թող դուրս ելլէ, որ իմ դժբաղդութեանս պատճառն է:

— Դուրս ելէք, կ'ըսեմ, անմիտ և անհնազանդ տղայ:

— Մինչեւ որ անկէ և իր տղէն վրէժս չլսածեմ, չափտի ելլեմ:

— Ձե՞ս լռեր, յամա՛ւ, աւելցուց Պ. Պրըվան, բռնելով իր տղուն թեւէն և զայն դէպի դուռ քաշելով:

— Ո՛չ, ըսել կ'ուզեմ թէ՛ կ'ատեմ զայն, թէ զայն մեռած տեսնել կ'ուզեմ:

— Անիծեալ տղայ, գոչեց Պ. Պրըվան, Ժիւլը իր բազուկներով վերցնելով:

Եւ զայն մինչեւ պզտիկ սենեակը տանելով, հոն բանտարկեց, զոյգ կղզանքներով կղպած ու կրկնեց սա խօսքերը.

Անիծեա՛լ տղայ:

Դ.

Կատաղած՝ խորթ մօր մը դէմ, իր անկաւորողութենէն ընկճուած, որ զինք արհամարհելով՝ վռնաւել կ'ուտար, արցունքներու մէջ ողողուած, մանաւանդ անիծեալ բառէն անկենդան դարձած, զոր իր հայրը երկու անգամ կրկնած էր, Ժիւլ մնաց ջլատ ու ճարահատ այն գորգին վրայ, ուր դրած էր Պ. Պրըվան:

Անիծեա՛լ, ըսաւ ինքնիրեն ուշաբերելուն, անիծեա՛լ, հայրս անիծեց զիս, որուն պատճառն է այն կինը. ո՛հ... անիկայ երկար չափտի ուրախանայ, վրէժս պիտի լուծեմ:

Եւ կանգնելով՝ յառաջացաւ դէպ ի դուռ, տեսաւ թէ բանտարկուած է: Այս բանէն սիրտը տեղէն ելաւ կարծես:

Անիծուած և բանտարկուած չարագործի մը պէս. ասիկա խորիտ ու համարձակ Ժիւլի հոգւոյն շատ մեծ ամօթ թուեցաւ, գլուխը վերցուց, չտկուեցաւ. սաստեց իր հայրը, արհամարհեց խորթ մայրը, ծաղրեց



եղբայրը: Իր ապագան անպատուած գտաւ, իր ցաւին իբրեւ դեղ կը գտնէր անձնասպանութիւնը:

Կը մտածէր ինքնասպանութեան վրայ:

Պատուհանէն ինքզինքը դուրս նետել. առիկայ թաղին մէջ շատ իրարանցումի տեղի պիտի տար, եւ յետոյ երկրորդ յարկէն սալայատին վրայ իյնալը շատ չարճարանք սիրտի պատճառէր:

Զմեւիով սպանուիլ... սր մը մատը կտրած էր եւ ժամերով արիւնելով իսկ չէր մեռած, ուրեմն այս միջոցն ալ լաւ չէր:

Սակայն, անիծուած եւ բանտարկուած, կրկնեց լալէն, ա՛յսքան թշնամանքէ ետքը կտրելի չէ ապրիլ այլ եւս. Այն ատեն յիշեց կնոջ մը պատմութիւնը, որ խեղդուելու համար ջուրը նետուած էր, այս միջոցը անպատշաճ գտաւ, հազուադիւս պաղարիւնութեամբ մը Ժիւլի պէս երիտասարդին դադափարին մէջը: Փախչելու միջոցին վրայ մտածեց:

Դպրոցականի մը համար՝ փականքը քակել, ձայն ձուռն չհանած գործադրել՝ խեղկատակութիւն մըն է, փականքը դիւրաւ վրցունելով Ժիւլ նրբանցքին մէջ ճողոպրեցաւ, շատ մութ գիշեր էր, սեղանատան դրան առջեւ հասնելով՝ լսեց իր խորթ մայրն ու Ալֆրէտը՝ որ կը խնդային, աւելի եւս կատղեցաւ, դէպ ի սանդուղ յառաջանալով կատուի մը դիւրաթեքութեամբ անկէ ցատքեց, կտրեց անցաւ գաւիթը, դրան չուանը տարօրինակ կերպով հնչեց, դռնապանը կարծեց թէ կառապանն է, որուն ձայնը բարկ ըմպելիներու ազդեցութեամբ մարած էր, եւ ինքզինք փողոցը գտաւ:

Ժամը եօթն էր, դեկտեմբեր ըլլալուն, ձիւնը դուր ու դադար չունէր գետինը ծածկելու:

Զբոնուելու համար շնչասպառ ըլլալու աստիճան վազելէն հասաւ վերջապէս Արուեստից կամուրջը՝ ուսկից անցնող երթեւեկողներուն շնորհին չտեսնուած անցաւ զինուորին առջեւէն, որ իւրաքանչիւրէն դրամ կ'ստանար. բազմութիւնը թողուց, որոնց հետեւելով կը յաջողէր փախչելու քիչ մը առաջ:

Քանի մը վայրկեան ետքը կամուրջը բոլորովին ամայացած, ո՛չ մէկ կողմէն աղմուկ

կար, եւ պատրաստուեցաւ իր ֆնասակար ծրագիրը գործադրելու: Գետակին ջուրը դիտեց, որ աւելի սեւ կ'երեւէր, այսպէս տեսաւ գետինն ու տուները, որոնք տեղացող ձիւնին ներքեւ հակապատկերը կը ներկայացնէին իր տեսածին: Երկինք նայեցաւ, վերը լոյս մը իսկ չնշմարեց, այս բաները այն ատեն տեղի կ'ունենային, ուր տղաք աղօթելէ յետոյ, կը պատրաստուէին անկողին մտնելու:

Զիւնին մէջ ծնրադրելով՝ ցուրտէն թըմրած պզտիկ ձեռուները իրար բերած, լալէն, բարձր ձայնով կ'ըսէր.

— Աստուած իմ, ներէ՛ իմ յանցանքս որ այսօր հօրս կսկիծ կը պատճառեմ: Առաւօտուն արթննալուն, իրեն պիտի իմացնեն թէ՛ իր ուրիշն տունը չէ: Աստուած իմ, գիտեմ թէ անիրաւ եմ ինքզինքս սպաննելու մէջ, վասն զի լսած եմ Պարտէն երէցէն՝ որ բարի եւ համակրելի քահանայ մըն է, թէ՛ ինքնասպանութիւնը ամէնէն ծանր ու մեծ մեղք է մարդու մը համար. ստոյգ է թէ ես մարդ չեմ տակաւին, բայց խնդրը նոյնն է նորէն: Եւ սակայն, Աստուած իմ, որ բարի ես եւ արդար, գիտես թէ՛ հօրմէս անիծուելէն եւ բանտարկուելէն յետոյ, այլ եւս չպիտի կրնայի ապրիլ, վատ մը պիտի համարուիմ եթէ այսուհետեւ՝ այսքան թշնամանքէ ետքը ապրիմ: Աստուած իմ, ներէ՛ իմ բոլոր մեղքերս, բոլոր յանցանքներս, տակաւին շատ դեռատի եմ եւ թերեւս մեղք գործած ըլլամ ակամայ: Ո՛վ Աստուած իմ, Դուն ինձմէ առիւ մայրիկս, զիս առաջնորդող մէկը չունիմ. մայրիկս, խեղճ մայրիկս, Ժիւլ իր արցունքը եւ ողբը աւելի եւս շատացուց, երբ միտքը բերաւ մօրը յիշատակը: Ո՛հ, եթէ ապրէիւ, քու որդիդ, սիրելի որդիդ չպիտի ստիպուէր ինքզինք սպաննելու, կամուրջի մը վրայ. ցուրտին վտանգի մէջ չպիտի ենթարկուէր, չպիտի լար ան, եւ տգեղ կին մը հայրս ինձի դէմ անիրաւ չպիտի կացուցանէր. մայրիկ, եթէ երկինքն ես, տես քու խեղճ Ժիւլդ՝ որ զքեզ կը փնտռէ, թեւերդ ինձ կարկառէ, սիրելի մայրիկս, ինչպէս կ'ընէիր կենդանութեանդ եւ ես հոն կը նետուէի... մայրիկս, ո՛հ մայրիկս, ինչո՞ւ մեռար. բայց տղու մը հոս լալէն ի՛նչ օգուտ, մայրս մեռած է, հայրս



զիս չսիրեր այլ եւս, մեռնելէ ուրիշ ճար չունիմ ես:

Այս խօսքերը լմնացած, Ժիւլ իր թեզանիքին ետեւով աչքերը սրբեց, ոտքի ելաւ, այս շարժումէն հինգ ֆրաքի ծրարը, զոր առաւօտուն հայրը տուած էր, իր գըրպանէն խուսափելով՝ կամուրջին տախտակամածին վրայ ինկաւ, որ պատուարուած ըլլալուն ձիւնը ծածկած չէր, և որ մինչև իրիկուն թղթավաճառի մը կրպակն էր:

Ժիւլ զայն առնել ուզեց, բայց աղքատի մը թողուլ կը մտածէր. նաև մտածեց թէ կարելի է հարուստ մը անցնէր անկէց ու առնէր զայն, լայն կերպով խորհրդածելով՝ վերջապէս լաւ համարեց առնել, և ինք ձեռքովը աղքատի մը տալ, վայրկեան մը ընկրկեցաւ. ո՛չ ոք կ'անցնէր. Ժիւլ քանի մը քայլ յառաջ գնաց, մէկը չկար. աւելի յառաջացաւ, կամուրջէն վար իջաւ, գիտական կաճառատան դիմացը. նորէն նայեցաւ, իրեն կողմէն երիտասարդ մը անցաւ, դրամը անոր ընծայել ուզեց:

Յանկարծ կաճառատան պատերը անոր յիշեցուցին փորագրիչ վաճառական մը, խիստ խեղճ, շատ աղքատ, որ իր հինումին փորագրութիւնները ամէն օր կը ցուցադրէր, և որուն հետ Ժիւլ կը խօսէր յաճախ. և երբեմն ալ գնումներ կ'ընէր երբ դրամ ունենար, և օր մը ան ըսած էր թէ իր կնոջ ու զաւակներուն տալիք հաց չունի:

Վաճառականը հոն չէր, ուր ըլլալն ալ չէր գիտեր, ինչպէս ընել... Ժիւլ դէպի չէնքը երթալու գաղափարը յղացաւ. պատերը ճեղքուած էին. Ժիւլ ծակէ մը նետեց դրամը ուր վաճառականը կը դնէր իր ապրանքը, այս հանճարեղ խորհուրդէն գոհ կը մեկնէր, երբ քալած ատեն տեսաւ առարկայ մը որ կը փայլէր մութին մէջ, նայեցաւ, ժողվեց և լապտերի մը մօտեցալով տեսաւ թէ իր հօրը թղթապանակն է:

Մօրը կենդանագիրը անոր մէկ գրպանն էր, ուզեց հասկնալ թէ կեցած էր թէ ոչ, բացաւ թղթապանակը, դրամատան տոմսեր աչքը զարկին, ուշադրութիւն չընծայեց անոնց, կենդանագիրը դտնելով իր տաքուկ շրթունքներուն տարաւ:


— Մայրիկ, մայրիկ, կ'ըսէր իւրաքանչիւր համբոյրին, ո՛չ մայրիկ, որքա՛ն կը սիրեմ քեզ չգոյութեանդ իսկ, սիրելի մայ-

րիկս, եթէ գիտնաս թէ որչա՛փ կը սգամ քեզ համար, ո՛հ, կ'աղաչեմ, եկու փնտռել զաւակդ. ա՛հ Աստուած իմ, Ամենակարողդ Աստուած, մայր մը առիւր, լաւ պիտի ընէիր զաւակն ալ առնելով. ի՛նչ կ'ընայ ընել տրդայ մը աշխարհի մէջ, մինակ առանց պաշտպանի:

— Է՛հ, լաւ, խլէզ, ի՛նչ կ'ընես հող, փողոցը առանց փեղոյրի, ըսաւ ձայն մը, որ ընդհատեց բոլոր այն խօսքերն ու խա՛ղաղատանքը, զոր Ժիւլ իր մօրը կենդանագիրին կ'ուղղէր:

Մնայեալն յաջորդով

Կ. Յ. ՏԵՎԷԼԵԱՆ



## ԹՐԱՆՍՎԱԼ

Թէ՛ւ մեր ծրագրէն դուրս է քաղաքական աշխարհը յուզող խնդիրներով զբաղիլ, սակայն ընդհանուր շահագրգռութեան նիւթ եղող պատերազմի մը վախճանը եւ երեք տարի շարունակ եւրոպան զբաղեցնող քանի մը անձերու պատկերները դնելն իսկ մեզի միջոյ կուտան. ամենահամաժուտ կերպիւ խօսիլ այդ պատերազմին պատմութեան վրայ:

Հաւաւ — Ափրիկեան Կայսրութիւն մը. — Բարեյուսոյ Գլուխի և Նաթալի գաղութներուն քով՝ Օրանժն ու Թրանսվալը ընդգրկող Կայսրութեան մը հաստատումը բաւական ատենէ ի վեր անգլիացի քաղաքագէտներուն երազը եղած էր: Մտքի այս վիճակին մէկ արտայայտութիւնն էր 1895ին Տոքթ. Ճէյմսընի արշաւանքը: Ուրիշ լանտերներու (Թրանսվալի ոսկեհանքի գաւառներուն մէջ հաստատուած անգլիացի ու օտար հպատակներ) պահանջումներ՝ այնքան բաղձացուած միջամտութեան մը առիթը ընծայեցին Միացեալ-Թագաւորութեանց: 1899 Հոկտ. 18 ին Գաղթային գործոց նախարար Մր. Չէմպրլէն Թրանսվալի առաջարկութիւններուն վրայ վիճաբանելու կը մերժէր. Հոկտ. 22ին Հանրապետութեան ու Անգլիոյ միջև թշնամութիւնները կ'սկսին: Օրանժի ազատ երկիրը 1897ի դաշնակցութեան համաձայն, կը միանար քոյր հանրապետութեան:


Թե՛ւամութիւններու սկիզբը. Երեք փաղափնեք պաշարուած. — Երբ թշնամութիւնները



սկսան՝ Անգլիացիք հազիւ քանի մը գունդեր ունէին Բարեյոյսի և Նաթալի մէջ, ընդամենը 20 հազարի մօտ զինուոր։ Պօէրները առաջուրնէ պատրաստուած էին պատերազմին։ 30 հազար հոգի ունէին, լաւ զինուած, ընտիր հրացանաձիգեր, նոր զրու-

րտա։ Արեւելքէն, զօրավար Ժուպէր՝ Կըլէնթօի մէջ հրամանատար Սայմընտի յաղթելէ ետքը ստիպեց Զօր. Ուայթը Լէտիմիթի մէջ քաշուելու (23 հոկտ.)

Անգլիական պարսուքիւն՝ Vosspr եւ Թուկէլա գետերու վրայ. — Պարապ տեղը անգ-



Զօրավար Քրօնթ.

թեամբ հրետանիներով օժտուած. շուտ մը յարձակողականի սկսելով Նաթալ ու Բարեյոյս արշաւեցին։ Արեւմտեան սահմանագլուխին վրայ Քրօնթէ զօրավարը 6' 00 սօէրներով պաշարեց Մէֆթինկը (18 հոկտ.) և ապա Քիմպրլին՝ ուր կը գտնուէր Սէսիլ

իացի զօրավար Մէթուէն պաշարեալ Քիմպրլիի օգնութեան կը փութայ։ Առաջին պարտութիւն մը կրելէ ետքը ի Պէշմօն (23 Նոյ.) Մատարըն անցնիլ կը փորձէ (28 հոկ.) բայց Մակէրաֆօնթայնի մէջ կը յաղթուի Քրօնթէ հրամանատարէն (12 Դեկտ.)։ Քանի




մը օր առաջ՝ զօր. Կէտէր՝ որ Օրանտ արշա-  
ւելու կը պատրաստուէր, Սթօրմպէրկի մօտ  
(9 Դեկտ.) պարտութիւն մը կը կրէ եւ 600  
ազիւացի զերի կ'իյնան Պօէրներուն ձեռքը:

Լէտսմիթի առջեւ, Սըր Րըտփըրա Պուլ-  
լըր աւելի բարեբախտ չգտնուիր: Հոկտ.  
21ին յաղթուելով Սթանտըսկէյթի մօտ,  
երկրորդ պարտութեան մը մէջ (11 Դեկտ.)

օրը կը վանուի Պօէրներէն: Հինգ օր տեւող  
պատերազմէ մը ետքը անգլիացիք կ'ստիպ-  
ուին յետս նահանջել եւ զօր. Պուլլըր ետ  
կ'անցնի Թուիւլայէն 2,500 հոգի կորսնցը-  
նելով:

Լօնսօնի մէջ հանգրային կարծիք. լորս Բո-  
պերդս եւ լորս Քիչնէր. — Այս երեք ամ-  
սուան անըդհատ պարտութիւնները սուգի



Զօրավար Բօպերդս

11 Թնդանթ կը կորսնցնէ ի Քօլէնզօ: Թու-  
կէլայի անցքը՝ Մէթուէնի Մօտորրէն անց-  
նելուն չափ անյաջող կ'ըլլայ: Լէտսմիթի  
մէջ փակուած զօր. Ուայդ յարձակում մը կը  
փորձէ դուրս ելլելու համար (6 Յունի.) եւ  
420 մարդ կը կորսնցնէ: Ուարրենի զօրու-  
բածինը կ'անցնի Թուիւլայն (19 Յունի.) եւ  
23ին կը գրաւէ Սթօնքօրը՝ ուրկէ յաջորդ

քող մը ձգեցին Լօնտօնի վրայ: Սթօնքօրի  
աղէտը նոր Մաթիւպա մը համարուեցաւ:  
Թշնամութեանց սկիզբէն ի վեր Պատերազ-  
մական նախարարութիւնը կրցածին չափ  
զինուոր կը դրկէր: Նոր բարձրագոյն հրա-  
մանատարը, լորտ Բոպէրդս՝ եւ իրեն օգ-  
նականը՝ լորտ Քիչնէր՝ Յունուար 11ին Բա-  
րէյոյս կը հասնէին: Անգլիական զօրաց ամ-



բողջութիւնը Հար. Ափրիկէի մէջ 150,000 հոգիի կը հասնէր: Յաղթութիւնը իր երեսը կը դարձնէր թիւին կողմը:

Քիմարլի կ'ազատի, Պոեքները կը նահանջեն դէպ ի Պէօմֆօնդայն. — Մարաշխտ լորտ Րոպէրդս Մօտարրի բանակին հրամանատարութիւնը կ'ստանձնէ: Օրանժ կը մըտնէ, կը գրաւէ Ժաքօպստալը, մինչ միւս կողմէ զօր. Թրէնչ Քիմարլիի վրայ կը սուրայ և կ'ազատէ զայն 112 օրուան պաշարումէ մը ետքը (16 Փետր.): Քրօնժէ զօրավարը կը յաջողի ինքզինքը ամփոփել եւ

առաջարկը՝ թէեւ մեռեալները թաղելու համար 24 ժամուան զինադադար մը զլացուած էր իրեն: Վերջապէս Փետրուար 27ին անձնատուր եղաւ: Երբ Պօէր հրամանատարը լորտ Րոպէրդսի առջեւ հասաւ, այս վերջինը անոր դիմացը երթալով՝ ձեռքը երկնցուց ու լսաւ. « Պարոն, սքանչելի դիմադրութիւն մը ըրիք »: Քրօնժէի հետ միասին 3,700 Պօէրներ անձնատուր եղան: Քրօնժէ Սէնթ Հէլէն կղզին զրկուեցաւ:

Պոեքները Լէսխամիքի պաշարումը կը վերցրնեն. — Զօր ժուպէր՝ Բաարտէպէրկի անձ-



Զօրավար Ժուպէր

կը նահանջէ Մօտարրի հովիտներուն մէջէն դէպի Պէօմֆօնդայն:

Քրօնժէի անձնատուութիւնը. — Լորտ Րօպէրդսի բանակէն հալածուած՝ Քրօնժէ միշտ նեղուելով իր եզնաձիգ սայլերուն դանդաղաշարժութենէն բանակը հաստատեց Մօտարրի եզերքը՝ Բաարտէպէրկի եւ Քուտունընտի մէջտեղը պաշարուելով՝ հրետանիի ամենաբոլորն կրակի մը տակ բանակատեղը բռնկեցաւ, ոակայն ինք դեռ կը դիմադրէր յուսահատներու վերջին ճիգովը: Արհամարհանօք մերժեց անձնատուութեան

նատուութեան լուրը առնելով՝ Լէտիամիթի պաշարումը վերցուց եւ դէպ ի Թրանսվալի սահմանագլուխը քաշուեցաւ վերջին անգամ զօր. Պուլլըրի պարտութիւն մը կրել տալէն ետքը: Մարտ 1ին, լորտ Տընտօնալտ Լէտիամիթ կը մտնէր 121 օր պաշարումէ ետքը:

Պասերազմին երկրորդ քշանը. — Քրօնժէի անձնատուութենէն և Լէտիամիթի պաշարումը վերնալէն ետքը նոր չըրջան մը կ'սկսի: Անգլիական բանակը 170,000 հոգիի զօրութեամբ կը յառաջանայ դէպի հիւսիս՝



միշտ նեղուելով Պօէր քօմանտօներէն : Անգլիացի զօրավար Ուօլսլի ըսած է . « Պօէրներուն հետ կռուիլը՝ մեղուներու խումբ մը հալածել ըսել է : »

Պլեօմֆօնդայնի գրաւումը . — Պօէրները դէպի հիւսիս քաշուելով Օրանժի մայրաքաղաք Պլեօմֆօնդայնը անպաշտպան թողուցին : Լորա Րոպէրդս գրաւեց զայն ու բաւական ժամանակ հոն մնաց առանց գործողութեան (13 մարտ) : Քիչ ժամանակ առաջ Քրիւկէր և Շդայն նախագահները հաշտութեան առաջարկ մը մատուցին Լոնտոն զորս լորտ Սալզպրի մերժեց (6 մարտ) . — Մինչդեռ լորտ Րոպէրդս Պլեօմֆօնդայնի մէջ անշարժ կը մնար, Պօէրները կը հաւաքուին Քրօնշդատի՝ Օրանժի երկրորդ մայրաքաղաքին շուրջը : Ժուլէր՝ Բրէդօրիայի գծին վայ՝ Պրանտֆորտի մէջ բանակ դրած է : Ապրիլ 1 ին, գնդապետ Պրէտֆօրտ կարեւոր պարտութիւն մը կրեց Պլեօմֆօնդայնէ 6 մղոն հեռու (7 թնդանօթ կորսուած և 200 սպանեալ) : Ամսոյն 8 ին, Տէվէդ պօէր զօրավարը՝ անգլիացիները կը հարուածէ Մինքէյսֆօնթայնի շուրջը և 600 մարդ կ'սպաննէ : Մարտ 27ին Չօր . Ժուլէր կը մեռնէր Բրէդօրիայի մէջ և իրեն կը յաջորդէր Չօր . Պօթա :

Մեֆֆինկ կ'ազատի . Եօհանեսպուրկ կը գրաւուի . Անգլիացիք Բրեդօրիայի մէջ . — Լորտ Րոպէրդս՝ Բարեյուսոյ հետ իր հաղորդակցութեան գիծերը ապահովցնելէ ետքը միայն կրցաւ դէպի հիւսիս շարժիլ : Վերջապէս ճամբայ ելաւ ու մայիս 12ին Քրօնշդատ կը մտնէր . 25ին Վապէն (Օրանժը թրանսլալէն բաժնող գետ) կ'անցնէր : Ամսոյն 18ին, Մէֆֆինկ՝ երեք պաշարեալ քաղաքներէն վերջինը, կ'ազատի : Գնդապետ Պատէն-Բօուէլ, 900 մարդով փախուած էր հոն 213 օրեր . Մայիս 30ին, Եօհանեսպուրկ ոսկիի մայրաքաղաքը, կը գրաւուի և յունիս 5ին, Թրանսլալի մայրաքաղաքը՝ Բրեդօրիա առանց դիմադրութեան կը յանձնուի անգլիացւոյ : Տիկնայք Քրիւկէր և Պօթա քաղաքէն չեն մեկնիր : Քրիւկէր նախագահ կը յայտարարէ թէ մայրաքաղաքը փոխադրած է դէպի հիւսիս՝ Լիտէնպուրկի մէջ, հրաւեր կը կարգայ Պօէրներուն դիմադրել մինչեւ վերջը : Մայիս 31ին՝ Իրլանտացի արքայա-

կան եռմէներ 13րդ վաշտը՝ որ իրլանտացի ազնուական ընտանիքներու պատկանող էրիտասարդներէ կը բաղկանար, Լինսոլիի մօտ յանկարծակի յարձակում մը կը կրէ (170 մեռեալ և 480 բանտարկեալ) :

2. Ե. ՊԵՐՊԵՐԵԱՆ



ԳՐԱՆԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ԺԻՒՆՆԱԿՆԵՐ

## ՈՒՂԵՒՈՐՈՒԹԻՒՆ

ԴԵՊԻ ԵՐԿՐԻՍ ԿԵԴՐՈՆԸ

— — —

(Շարունակութիւն 21րդ թիւէն)

- Հօրեղբայր :
- Զաւակ :
- Կ'ուզեմ գիտնալ թէ մեզի բաժնող հեռաւորութիւնը ո՞րքան է :
- Շատ դիւրին է :
- Այո՛ . բառ մը արտասանեցէք, ճիշդ երկվայրկեանը նշանակելով . երբ որ լսեմ, անմիջապէս պիտի կրկնեմ այդ բառը, եւ դուք պիտի ճշդէք ձեր իմացած վայրկեանը :
- Այո՛, խօսելուս եւ պատասխանը առնելուս մէջտեղ անցած ժամանակին կէսը պիտի ցուցնէ թէ ձայնը որքան ատենէն կտրեց անցաւ այդ միջոցը :
- Ճիշտ է . հօրեղբայր :
- Պատրաստ ես :
- Այո՛ :
- Լա՛ւ, քու անունդ պիտի ըսեմ : Ականջս ղպտին կռթնցուցի և երբ «Աքսէլ» բառը լսեցի, անմիջապէս պատասխանեցի ու սպասեցի :
- Քառասուն երկվայրկեան . ըսաւ հօրեղբորս ձայնը, երկու բառերուն մէջտեղ, ըսել է՝ ձայնը քսան երկվայրկեանէն կը կտրէ այս միջոցը . արդ մէկ երկվայրկեանը 1020 ոտք հաշուելով՝ մէկուկէս մղոն և մէկ ութերորդ կ'ընէ :
- Մէկ ու կէս մղոն :
- Այս հեռաւորութիւնը բան մը չէ՛, Աքսէլ :



— Բայց ի՞նչ ելու՞մ եմ, թէ վեր ելլելու :


— Ի՞նչ ելու ես, Աքսէլ, և ահա թէ ինչո՞ւ : Հիմա ընդարձակ տեղ մը կը գտնուինք ուրկէ կը մեկնին շատ մը գետնուղիներ : Դուն ալ անոնցմէ մէկուն մէջ մտած ըլլալու ես : Ո՛տք ել ուրեմն և ճամբայ ինկիր : Քալէ՛, ինքզինքդ քաշքշէ՛, և ճամբուն ծայրը մեզի պիտի գտնես որ գլխաւորաց կ'սպասենք : Ծամբայ ել ուրեմն, Աքսէլ :

— Այո խօսքերը սիրտ տուին ինծի :

Ի՞նչ .

Երբ ինքզինքիս եկայ, կէս մութ տեղ մը՝ հաստ ծածկացներու վրայ պառկած էի . հօրեղբայրս քովս կը հսկէր . դէմքիս վրայ կենդանութեան նշան մը փնտուելով : Առաջին հառաջիս՝ ձեռքէս բռնեց, առաջին նայումածքիս՝ ուրախութեան աղաղակ մը արձակեց :

— Կ'ապրի կոր, կ'ապրի կոր, գոչեց :



— Մնա՛ք բարով, հօրեղբայր, գոչեցի :

— Յտեսութիւն, Աքսէլ :

Ասանք եղան վերջին խօսքերնիս : Երախտագիտական աղօթք մը ըրի Աստուծոյ, ոտքի ելայ և ինքզինքս նետեցի դէպի յառաջ : Վայրկեան մը եղաւ ուր այնչափ աւրագ վար կը սահէի որ ինքզինքս բռնել անկարելի էր : Յանկարծ ոտքս պարապը գնաց, ցից ճամբէ մը վար գլորեցայ եւ գլուխս ցից քարերուն զարնուելով մարեցայ ինկայ :

— Այո՛, պատասխանեցի տկար ձայնով :

— Զաւա՛կս, ըսաւ հօրեղբայրս զիս կուրծքին վրայ սեղմելով, ազատեցա՛ր,

Ասանկ փորձեր պէտք էին՝ դասախօսին սրտին մէջ նման յուզում մը յառաջ բերելու համար : Այո պահուն Հանս ներս մտաւ . դէմքը զուարթ երևոյթ մը առաւ, « Կօտ տէկ » ըսաւ ձեռքս սեղմելով :

— Բարե՛ւ, Հանս, բարեւ, միմեջեցի : Հիմա՛ հօրեղբայր, բռնէ թէ ո՛ւր կը գտնուինք :



— Վաղը, Աքսէ՛լ, վաղը, հիմա շատ տկար ես, քնացի՛ր :

— Գէթ ըսէք թէ ժամը քանի՞ն է, ո՞ր օրուան մէջն ենք :

— Իրիկուան ժամը 11 է. այսօր կիրակի է, օգոստոս 9, եւ չեմ ներեր որ ամսուն 10էն առաջ հարցում մը ընեն :

Իրաւ ալ շատ տկար էի, շուտ մը քնացայ՝ մտքէս չհանելով որ 4 օր ամբողջ կորսուած մնացեր էի :

Յաջորդ օրը երբ արթնցայ, աչքերս չորս կողմս պտըտցուցի, անկողնիս գետեղուած էր սքանչելի շթաքարերով զարդարուած քարայրի մը մէջ. գետինը բարակ աւազով ծածկուած էր. թէեւ ոչ լապտեր, ոչ ալ ջահ վառուած էր, սակայն կէս-լոյս մը՝ քարայրին նեղ դռնէն ներս կը թափանցէր: Նոյնպէս տարտամ աղմուկ մը կ'առնէի, նման ծովեզրին վրայ փչրուող ալիքներու, որու կը խառնուէր նաեւ հովի մը սուլումը: Երա՛զ կը անոնէի արդեօք: Այս միջոցին հօրեղբայրս ներս մտաւ:

— Բարիլոյս, Աքսէլ, ըսաւ զուարթութեամբ, յուսամ աղէկ ես քիչ մը:

— Հապա՛, հօրեղբայր, ըսի անկողնիս մէջ նստելով, ինքզինքս շատ աղէկ կ'ըզգամ եւ իբր ապացոյց՝ ազուր ընդունելութիւն մը պիտի ընեմ պատրաստած նախաճաշերնուդ:

— Հիմա կը պատրաստեմ, ըսաւ հօրեղբայրս:

Մինչդեռ անկիւս ճաշը կը պատրաստէր, հագարումէկ հարցումներ կ'ընէի իրեն: Ասանկով իմացայ թէ ինչպէս ահագին քարի կտորներու հեղեղի մը մէջ ես ալ քշուեր եւ մինչեւ գետնուղիին բերանը ինկեր էի:

— Ինչեւէ, ըսաւ դատախօսը, ա՛լ ասկէ ետքը իրարմէ չբաժնուինք, գուցէ մէկ մըն ալ իրար չենք գտնար:

Ըսել է ճամբորդութիւնը դեռ չէր լնացած. Աչքերս խոշոր խոշոր բացի:

— Ինչ կայ, Աքսէլ:

— Ներեցէ՛ք որ հարցում մը ընեմ. կ'ըսէք թէ ողջ առողջ եմ:

— Հապա՛:

— Բոլոր անգամներն անջնա՞ն են:

— Այո՛:

— Հապա գլո՞ւխս:

— Գլուխդ, քանի մը վէրքերէ զատ, կատարեալ վիճակի մէջ երկու ուսերուդ վըրայ դրուած է:

— Վախճամ ուղեղս է որ խանգարած է:

— Խանգարուած:

— Այո՛: Երկրիս երեսը ելա՞նք հիմակ:

— Անշուշտ ո՛չ:

— Ուրեմն պէտք է որ խենդեցած ըլլամ, ինչու որ ցերեկուան լոյս կը տեսնեմ, փչող հովին սուլումը կը լսեմ, եզերքին վըրայ խորտակող ալիքներու ձայնը կ'առնեմ:

— Բա՛հ, մինակ ա՞մ է:

— Կը հասկընէ՞ք...

— Բացատրեցէ՛ք բան չկայ. բայց պիտի տեսնես որ երկրաբանութիւնը դեռ իր վերջին խօսքը ըսելէ չա՛տ հեռու է:

— Դո՛ւրս ելլա՛նք, գոչեցի:

— Ձէ՛, Աքսէլ, հովը ուժով է, կրնայ վնասել քեզ:

— Հաւատացէ՛ք որ բոլորովին աղէկցած եմ, դուրս ելլենք նայի՛նք:

— Քիչ մըն ալ համբերէ, տղաս: Այսօր ալ յօգնութիւն առ, վաղը նաւ պիտի նըստինք, կրնայ ըլլալ որ ճամբորդութիւնը երկար տեւէ:

Վերջին խօսքին վրայ ա՛լ չդիմացայ. ցատքեցի ելայ եւ հօրեղբորս արգելքին հակառակ՝ անխթարթի մը մէջ հագուելով դուրս նետուեցայ:

Լ.

Առջի բերան բան մը չտեսայ. աչքերս մութին վարժուելով շուտ մը գոցուեցան: Կամաց կամաց վարժուելով երբ զանոնք բացի՝ մեծ եղաւ զարմացումս:

— Ծովը՛, գոչեցի:

— Այո՛, պատասխանեց հօրեղբայրս, Լիտէնպրօքի ծովը: Ո՛չ մէկ նաւորդ պիտի կրնայ վիճել այդ պատիւը ընծայելու իմ անունիս:

Ջուրի ընդարձակ ծածկոյթ մը կը տարածուէր աչքի տեսողութենէն ալ անդին: Ճշմարտ ովկիանոս մըն էր՝ տոնյն եւ քիչ մըն ալ վայրենի եզերքներով: Զարմանալին՝ բոլոր այս բաները լուսաւորող լոյսն էր. անշուշտ արեւին ճառագայթները չէին անոնք, ոչ ալ լուսինին: Ելեքորական լոյս



| ՀԱՆՐԱԳԻՏԱԿ կը հրատարակուի ամէն ամսոյ 1ին, 10ին եւ 20ին |  |                   |                       |
|--------------------------------------------------------|--|-------------------|-----------------------|
| Կ. ՊՈԼՍՈՅ ՀԱՄԱՐ                                        |  | ՀԱՍՑԷ             | ԳԱԽԱՌՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ      |
| Տարեկանը 40 դահեկան                                    |  | ՆՇԱՆ Կ. ՊԵՐՊԵՐԵԱՆ | Տարեկանը 45 դահեկան   |
| Վեցամսեան 20 »                                         |  | Կ. ՊՈԼԻՍ          | Վեցամսեան 25 »        |
| Եռամսեան 10 »                                          |  | ՊԱՊ ԱԼԻ ՃԱՏՏԷՍԻ   | Եռամսեան 12 1/2 »     |
| ՌՈՒՍԻՈՅ ՀԱՄԱՐ                                          |  | ԹԻՒ 38            | ՕՏԱՐ ԵՐԳԻՐՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ |
| Տարեկանը 4 բուպի                                       |  |                   | Տարեկանը 10 ծրանք     |

Ձեռքէ կը ծախուի հաար 40 փարայ

մըն էր, մշտնջենական հիւսիսայգի պէս բան մը որ տարտամ ձերմակ ճառագայթներով կը ցլացնէր վճիտ ծովուն եզերքը:

(Շարունակելի)

Թարգմ.

ՋԱՐԵՆ Ն. ՊԵՐՊԵՐԵԱՆ



#### ԿԱՐԵԻՈՐ ԶԵԿՈՅԾ

Հանրագիտակի հրատարակութեան ձեռնարկելէ ի վեր՝ միշտ զգուշացանք մեր ազնիւ Բաժանորդներուն յիշեցնել՝ բաժանորդագիրներու վճարման համար իրենց ունեցած պարտականութիւնը, բայց տեսնելով որ մեր կողմանէ ցոյց տրուած սոյնօրինակ վարմունք մը՝ շատերու կողմանէ դիւրիմացութեան տեղի կուտայ, եւ փոխանակ մեզի ձեռնառու եւ զօրավիպ ըլլալու սոյն դժուար ձեռնարկին մէջ՝ աւելի նեղ կացութեան մը կը մատնեն, կը խնդրենք այն ազնիւ Բաժանորդներէն, որոնք մինչեւ ցոյսօր չեն վճարած իրենց բաժնեգիրն՝ բարեհաճին վճարել:



#### ՇԱՐԱԳԻՐՈՒԹԵԱՆ ՆԻԻԹԵՐ

Մարդը ամենատկար եղէդ ժըն է, բայց խորհող եղէդ մը: Հարկ չկայ որ ամբողջ տիեզերք իրար անցնի գայն ջնջելու համար, պզտիկ քար մը կը բաւէ: Բայց նոյն խօսքէ ամբողջ բնութիւնը մարդուն վրայ փըլչէր, նորէն մարդը անկէ ազնիւ պիտի ըլլար, ինչու որ իր վիճակին գիտակցութիւնը պիտի ունենար:

Յուցուցէք թէ այս տողերուն իմաստը հասկըցած էք: Յայտնուած գաղափարը ճիշդ է թէ ոչ, եւ ինչո՞ւ:


\* \*

Ի՞նչ յատկութիւններ ունենալու է մէկը « կատարեալ մարդ » մը ըլլալու համար: Ձեր ընկերներէն ու ծանօթներէն օրինակներ մէջ բերելով ցուցուցէք թէ որո՞նք ի՞նչ պակասութիւններու համար չեն կրնար այդ տիտղոսն ունենալ:

\* \* \*


Եթէ մենք հպարտ չըլլայինք, ուրիշին հպարտութենէն չպիտի գանգատէինք:

Սոյն երեք Շարագրութեան նիւթերուն վրայ գրուած գրութիւնները պէտք է մեզ հասցընել մինչեւ Յուլիս 10, կողքին վրայ գտնուած 22րդ կտրոնով միասին:



Մեծ. Սմբատ էֆ. Դաւթեանի կողմանէ հրատարակութեան ձեռնարկուած ՆՈՐ ԴԵՊՐՈՅԻ 10րդ, վերջին պրակն եւս ի լոյս ընծայուեցաւ: Ամբողջ տասը պրակի գինն է 30 լր:

Դիմել Սմբատ էֆ. Դաւթեանին, Կ. Պոլիս, Սիրքէճի, Խօրառանճեան խան:



Նշան Պապիկեան Գլխատան միջոցաւ ի լոյս ընծայուեցաւ տիկին Չապէլ Լ. Առատուրի (Սիպիլ) տպեալ եւ անտիպ ոտանաւորներու փոքր մէկ հաւաքածոն, 92 երեսէ բաղկացեալ: Գին 5 զրչ: — Դիմել Պապիկեան գրատուն, Պոլիս, Էսկի Չապթիէ ճառտէսի:

ԽՄԲԱԴՐԱՊԵՏ — ԱՐՏՕՆԱՏԷՐ  
ԱՐՄԷՆ ԼՈՒՍԻՆԵԱՆ

ՏՊԱԳՐԻԶ — ՀՐԱՏԱՐԱԿԻԶ  
ՆՇԱՆ Կ. ՊԵՐՊԵՐԵԱՆ

Պապը Ալի ճատտէսի, Թիւ 38, Իգտամ լրագրի դէմ



THE UNIVERSITY OF CHICAGO  
LIBRARY

THE UNIVERSITY OF CHICAGO

THE UNIVERSITY OF CHICAGO

THE UNIVERSITY OF CHICAGO

THE UNIVERSITY OF CHICAGO

THE UNIVERSITY OF CHICAGO

THE UNIVERSITY OF CHICAGO

THE UNIVERSITY OF CHICAGO

THE UNIVERSITY OF CHICAGO

THE UNIVERSITY OF CHICAGO

THE UNIVERSITY OF CHICAGO

THE UNIVERSITY OF CHICAGO

THE UNIVERSITY OF CHICAGO

THE UNIVERSITY OF CHICAGO

THE UNIVERSITY OF CHICAGO

THE UNIVERSITY OF CHICAGO

THE UNIVERSITY OF CHICAGO

THE UNIVERSITY OF CHICAGO

THE UNIVERSITY OF CHICAGO

THE UNIVERSITY OF CHICAGO

THE UNIVERSITY OF CHICAGO



# ՆՇԱՆ Կ. ՊԵՐՊԵՐԵԱՆ Տ Պ Ա Ր Ա Ն Ը

Փոխադրուած ըլլալով՝

Կ. ՊԵՐՊԵՐ, ՊԱՊԸ ԱԼԻ ԶՍՏԵՍԻ, ԹԻԻ ՅՏ. ԻԳՏԱՄ ԼՐԱԳՐԻ ԴԻՄԱՅ

Ստացած է տպագրական նոր

կազմակերպութիւններ

ազգեր, հանդեսներ, ԵՐԶԱՐԵԱԿԱՆՆԵՐ, հարսանեաց հրաւիրագրեր, նամակագրութիւններ, այ-  
ցաֆարդեր, եւ տպագրութեան վերաբերեալ ամեն տեսակ պիտոյքներ: — Տպարանին սեփական  
20000 է աւելի պատկերները յանախորդաց տրամադրութեան տակ են ձրի:

Անմրցելի մաքրութիւն եւ ճշգրտութեամբ  
գաւառներէն ալ կ'ընդունի ամեն տեսակ յանձնարարութիւններ:




ՀԱՆՐԱԳԻՏԱԿԻ նոր բացած Շարադրութեան մրցումներն  
մասնակցողները պարտին սոյն կտրոնը կտրելով՝ իրենց գը-  
րութեանց հետ ղրկել իմ Երազրութեանս, հակառակ պարա-  
գային՝ նկատողութեան չեն առնուիր:

Հանրագիտակ օճաքէ կը ծախուի Պոլսոյ մէջ հատ  
40, իսկ գաւառաց մէջ 50 փարսոյ:

Թ Է Յ

Թ Է Յ

Թ Է Յ



Ը Ն Տ Ի Ր

Հ Ո Տ Ա Ի Է Տ

Խ Ն Ա Յ Ո Ղ Ա Կ Ա Ն

Կ. ԵԱՎՐՈՒԵԱՆ և Յ. ԻՍԱԳՈՒԼԵԱՆ վաճառատունը պատրաստ՝ և թէ օր ըստ օրէ  
ասնող թարմ և ազնուագոյն տեսակ թէյերով կրնայ այսօր անմրցելի աժանութեամբ  
գոհացում տալ նոյն իսկ էն խստապահանջ թէյի սիրահարներու: ԵԱՎՐՈՒԵԱՆ եւ ԻՍԱ-  
ԳՈՒԼԵԱՆ հատատութիւնը կը թղթակցի գաւառներու հետ եւ յանձնարարութիւններ կը  
կատարուին ամենայն ճշգրտութեամբ:

Աժան, ընտիր ու հոտաւէտ թէյ գործածողներու ջերմապէս կը յանձնարարենք ան-  
ղամ մը այցելել Կ. ԵԱՎՐՈՒԵԱՆ եւ Յ. ԻՍԱԳՈՒԼԵԱՆ վաճառատունը, ձէլալ-Պէյ խանի  
կից թիւ 10, ուր պիտի դտնեն մեծաքանակ և փոքրաքանակ թէյի ճոխ մթերք մը:

Ա. Ժ. Ա. Ն

Ա. Ժ. Ա. Ն

Ա. Ժ. Ա. Ն